

**ԿԱՊԻՏԱԼ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ 1 ՀԱ ՑԱԾՐԱՃ
ԾԻՐԱՆԻ ԱՅԳՈՒ ՕՐԻՆԱԿՈՎ (ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ)**

Շիրազ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱԱՀ ԱՊՀ էկոնոմիկայի ամբիոնի ասպիրանտ

Բանալի բառեր. պտղաբուծություն, ներդրում, ծախս, եկամուտ,
արդյունավետություն, ծիրան, բերքատվություն

Պտղաբուծությունը գյուղատնտեսական արտադրության կարևոր և եկամտաբեր ճյուղերից մեկն է: Հայաստանի Հանրապետությունում պտղի և հատապտղի արտադրության հիմնական կենտրոններից մեկը հանդիսանում է Արմավիրի մարզը: Մարզի պտղի և հատապտղի տարածությունների կառուցվածքում տարիներ շարունակ զգալի տեսակարար կշիռն են կազմում ծիրանենիները (2015 թվականին շուրջ 50%): Միևնույն ժամանակ, բերքատվության առավել մեծ տատանումներ նկատվում են ծիրանի արտադրության ժամանակ: Վերջինս կախված է այն հանգամանքից, որ տվյալ պտղատեսակի վեգետացիոն ժամանակահատվածը ավելի շուտ է սկսվում, քան մյուս պտուղներից, իսկ վաղ գարնանային ցրտահարությունները զգալիորեն վնասում են հատկապես արդեն իսկ ծաղկման շրջանում գտնվող ծիրանենիներին: Հայաստանում ծիրանենու մշակությունը ունի դարավոր պատմություն, իսկ մեր երկրում արտադրված ծիրանն աչքի է ընկնում իր համային բարձր հատկանիշներով և մրցունակ է արտաքին շուկաներում: Հաշվի առնելով վերոնշյալ առանձնահատկությունները, մարզում առանձնակի ուշադրության պետք է դարձնել կորիզավորների՝ հատկապես ծիրանենիների, արտադրության զարգացման և արտահանման խթանման վրա: Մեր կողմից կատարված ուսումնասիրությունները, միջազգային փորձի գնահատումը, սեփական այլ դիտարկումները ցույց են տալիս, որ մարզում պտղաբուծության զարգացման հիմնական ուղին պետք է լինի ինտենսիվ այգեգործությունը: Արարատյան դաշտի առանձնահատկություններից ելնելով հաշվարկել ենք 1 հեկտար ցածրաճ ծիրանի այգու հիմնման և մշակության ժամանակ ակնկալվող ծախսերը և եկամուտները: Արմավիրի մարզում մշակվող ծիրանենիներից առավել տարածված է Երևանյան (շալախ) ծիրանենու տեսակը: Արարատյան դաշտի պայմաններում, ծիրանենու այս տեսակի բարձրությունը կազմում է միջինը 5-6 մետր (որոշ դեպքերում մինչև 8-10 մետր), ինչը բացառում է հակակարկտային ցանցերի կիրառումը և նվազեցնում՝ բնական աղետների դեմ պայքարի միջոցառումների արդյունավետությունը: Արդյունքում ծիրանի արտադրությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտներին զգալի վնասներ են պատճառում վաղ գարնանային ցրտահարությունները և կարկտահարությունները: Այս խնդրի լուծման և ծիրանի արտադրության արդյունավետության բարձրացման նպատակով առաջար-

կուն ենք ներդնել ցածրաձև ծիրանենիների տեսակներ: Ցածրաձև ծիրանենիների ստեղծման առումով զգալի աշխատանքներ են կատարվել Արմավիրի մարզի Լենուդի համայնքում գործող տնկիների արտադրության կենտրոնում: Այստեղ իրականացված փորձերի միջոցով արտասահմանյան ունիվերսալ ծիրանենիների պատվաստակալների (Կուբան 86, Էվրիկա 99, Դրուժբա) և տեղական Երևանյան ծիրանենուց ստացել են ցրտադիմացկուն և ցածրաձև տնկանյութ: Վերջինիս բարձրությունը հասնում է մինչև 3 մետրի, 1 հեկտարի հաշվով ծառերի քանակը՝ 555 (6x3 տնկման սխեմա), ակնկալվող բերքը 1 ծառի հաշվով՝ 45-50 կգ (1 հեկտարի հաշվով 25-27 տոննա), իսկ տնկանյութի արժեքը՝ 1500 դրամ: Աղյուսակ 1-ում իրականացված հաշվարկների համար 1 կգ ծիրանի գին ընդունվել է ՀՀ ԱՎԾ-ի կողմից հրապարակված 2000-2015 թվականների ծիրանի միջին գինը՝ 305 դրամ: Մեր կողմից իրականացված հետազոտությունների համաձայն, հակակարկտային ցանցերի և ցրտահարությունների դեմ պայքարի միջոցառումների կազմակերպման նպատակով անհրաժեշտ կապիտալ ներդրումները 1 հեկտար պտղատու այգու հաշվով, կազմում է շուրջ 9,3 մլն դրամ:

Աղյուսակ 1. ՀՀ Արմավիրի մարզում 1 հեկտար ծիրանի այգու հիմնումից և մշակությունից ակնկալվող կանխիկ դրամական հոսքերը (հազ.դրամ)¹


Անվանում/տարիներ	2017	2018	2019	2020	2021	2022	2023	2024	2025	2026	2027	2028	2029	2030	2031
Ավելանված մնացորդ մն դրամ	0.1	0.24	0.07	0.11	0.03	2.5	4.9	7.7	11.3	14.9	19.7	25.4	30.5	34.8	38.4
Մուտքեր	1500	800	1100	1230	6130	1593.2	6932	7737	7737	7737	7737	6932	6130	5324	5324
Մուտքեր վճարումների	0	0	0	330	5630	6432	7237	7237	7237	7237	7237	6432	5630	4824	4824
Այլ գործունեության մուտքեր	500	500	500	500	500	500	500	500	500	500	500	500	500	500	500
Վարկեր	1000	300	600	400	0	9000	0	0	0	0	0	0	0	0	0
Ելքեր	1375,3	976,1	1081	1322,6	3678,2	13488,4	4162,9	4161,7	4096,4	3020,9	1983,1	1844,3	1832	1743,9	1735,2
Ցնկանյութ	832,5	64,5	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
Պարարտանյութ	78	98,8	143,6	147,5	155	159,4	161,5	163,3	164,2	165	164,5	151,5	175,6	178,9	181,5
Բուժամյութ	52,3	81,7	122,8	123,1	134,6	355,4	356,8	356,9	358,5	355,6	361,8	361,5	361,8	364,7	368,5
Վրոտ գործիքներ	31,4	32,6	35,8	39,5	39	43,4	48,9	51,2	52,5	53	51,5	48,7	51,8	53,6	50
Աշխատավարձ	150,5	447	498	545	682	695	728	749	751,5	753	751,5	695,9	698	649,7	645,5
Մեք. տրանս. ծախսեր	83,6	102,5	111,8	125	135,6	138,7	144,2	148,8	151,5	152,6	153,8	144,8	146,7	144,5	141,3
Իրացման ծախսեր	0	0	0	53,5	147	249,5	346,5	395,5	401,2	404,7	403	344,9	301,1	255,5	251,4
Հողի հարկ	17,5	17,5	17,5	17,5	17,5	17,5	17,5	17,5	17,5	17,5	17,5	17,5	17,5	17,5	17,5
Ոռոգման ջրի վարձ	79,5	79,5	79,5	79,5	79,5	79,5	79,5	79,5	79,5	79,5	79,5	79,5	79,5	79,5	79,5
Վարկի մարումներ	50	52	72	192	2288	2450	2280	2200	2120	1040	0	0	0	0	0
ՔՆ. արժեքների պայքարի կապ. ներդրում	0	0	0	0	0	9300	0	0	0	0	0	0	0	0	0

Աղյուսակ 1-ում ներկայացված է 1 հա ծիրանի այգու հիմնումից սկսած կանխիկ դրամական հոսքերը՝ 15 տարի ժամանակահատվածով:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ առաջարկվող ծիրանենու տեսակը լիարժեք բերքատվության է անցնում այգու հիմնման 5-6-րդ տարում, իսկ տնկանյութի բարձր որակական հատկանիշների շնորհիվ ակնկալվում է 1 հեկտարի հաշվով 25-27 տոննա բերք: Աղյուսակում ներկայացված

¹ Հեղինակի անձնական հաշվարկներ

տվյալների համաձայն այգու հիմնման և մշակության համար պահանջվող ծախսերի գումարը կազմում է շուրջ 47 մլն դրամ, իսկ նույն ժամանակահատվածում արտադրանքի վաճառքից եկամտի (հասույթ) գումարը շուրջ 70 մլն դրամ: Դիտարկվող ժամանակահատվածում կանխատեսվող դրամական հոսքերը ներկայացված է գծապատկեր 1-ում:



Գծապատկեր 1. 1 հա ծիրանի այգու հիմնման և մշակության ընթացքում ակնկալվող ծախսերը և հասույթը

Գծապատկերում ներկայացված տվյալների համաձայն, 6-րդ տարում անհրաժեշտ կլինի իրականացնել կապիտալ ներդրումներ՝ բնական աղետների դեմ պայքարի միջոցառումների կազմակերպման նպատակով:

Համաշխարհային պրակտիկայում կապիտալ ներդրումների արդյունավետության գնահատման համար լայն տարածում են ստացել մի շարք չափանիշներ, որոնցից մեկը զուտ դիսկոնտավորված արժեքն է (Net present value, NPV):

Տնտեսագետներ Ի. Վ. Սերգեևը, Ի. Ի. Վերետեննիկովան վերլուծելով տարբեր գիտնականների գիտական աշխատությունները, եկել են այն եզրակացության, որ ներդրումների տնտեսական հիմնավորման առավել տարածված մեթոդը զուտ դիսկոնտավորված արժեքի (ԶԴԱ) և իրական ներդրումների (Կ) համեմատման մեթոդն է, այսինքն այս դեպքում ներդրումների տնտեսական հիմնավորման չափանիշ է ծառայում ԶԴԱ-ն: Եթե՝

- ԶԴԱ > Կ > 0- ապա նախագիծը պետք է ընդունել,
- ԶԴԱ = Կ = 0- նախագիծը ոչ շահութաբեր է և ոչ էլ վնասաբեր,
- ԶԴԱ < Կ < 0- նախագիծը պետք է մերժել²:

² Ե. Պարսեղյան, Իրական ինվեստիցիաների (կապիտալ ներդրումների) արդյունավետության գնահատման ցուցանիշների համակարգը, Եր., Տնտեսագետ 2003, էջ 22:

Գիտնականները միակարծիք չեն ՋԴԱ հաշվարկման հարցում, սակայն մի շարք տնտեսագետներ (Ղանիել Ռուբինֆելդ, Ռոբերտ Պինայկ և այլն), ՋԴԱ առաջարկում են որոշել նախագծի իրացման ժամանակ ստացված զուտ շահույթի հիման վրա: Այս մոտեցումը առավել կիրառական է միջազգային պրակտիկայում: Վերջինիս համաձայն ՋԴԱ-ն որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{ՋԴԱ} = \text{ՋՇ}_1/(1+\text{Ղ}_0) + \text{ՋՇ}_2/(1+\text{Ղ}_0)^2 + \text{ՋՇ}_3/(1+\text{Ղ}_0)^3 + \dots + \text{ՋՇ}_n/(1+\text{Ղ}_0)^n - \text{Կ}$$

Որտեղ՝ Կ-ն՝ նախագծի իրացման համար անհրաժեշտ կապիտալ ներդրումներն են, ՋՇ₁- ՋՇ_n-ն՝ նախագծի իրացումից ըստ տարիների ստացած շահույթն է, Ղ₀-ն՝ դիսկոնտի նորման է:

Աղյուսակ 1-ում ներկայացված տվյալների հիման վրա իրականացնենք կապիտալ ներդրումների արդյունավետության հաշվարկ՝ 12% դիսկոնտավորման նորմայի պայմաններում: Աղյուսակում ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ հակակարկտային ցանցերով այգու արդիականացման և ցրտահարությունների դեմ պայքարի սարքավորումների ձեռքբերման համար կապիտալ ներդրումները իրականացվել են այգու հիմնման 6-րդ տարում: Կապիտալ ներդրումների արդյունավետության հաշվարկի վերաբերյալ ելակետային տվյալները ներկայացված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. 1 հեկտար ծիրանի այգու կապիտալ ներդրումների արդյունավետության հաշվարկի համար ելակետային տվյալներ

Ցուցանիշներ	Տարիներ									
	1	2	3	4	5	6	7	8	9	10
Զուտ շահույթ/վնաս (նլն դրամ)	(7,1)	2,3	3,1	3,1	4,2	5,3	4,6	3,8	3,1	3,1
$(1+\text{Ղ}_0)^n$	1,12	1,25	1,4	1,57	1,76	1,97	2,21	2,48	2,77	3,1

Ներկայացված տվյալների համաձայն՝ $\text{ՋԴԱ}=1.2$ նլն դրամ:

Կատարված հաշվարկները ցույց են տալիս որ $\text{ՋԴԱ}>0$, այսինքն կապիտալ ներդրումները հանդիսանում են արդյունավետ և կարող են գործնական կիրառություն ստանալ: Կատարված ուսումնասիրությունների և սեփական այլ դիտարկումների արդյունքում, կարող ենք եզրակացնել, որ Արմավիրի մարզում պտղաբուծության զարգացման հեռանկարը հիմնականում կապված է կորիզավոր պտղատեսակների տարածքների ավելացման և վերջիններիս արտադրության արդյունավետության բարձրացման հետ: Մարզում պտղաբուծության ճյուղի զարգացման կարևորագույն նախապայմանը կապիտալ ներդրումներով ինտենսիվ այգիների հիմնումն է, որը թույլ կտա ստանալ բարձրորակ և մրցունակ արտադրանք, իրացնել ներքին և արտաքին շուկաներում, ապահովելով տնտեսավարող սուբյեկտների եկամուտների կայունություն և եկամտաբերության բարձր մակարդակը:

Շիրազ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Կապիտալ ներդրումների արդյունավետությունը 1 հա ցածրաձ ծիրանի այգու օրինակով (ՀՀ Արմավիրի մարզի պայմաններում)

Բանալի բառեր: պտղաբուծություն, ներդրում, եկամուտ, ծիրան, բերքատվություն

Հոդվածում ներկայացվել է ՀՀ Արմավիրի մարզի ծիրանի այգիներում բնական աղետների դեմ պայքարի նպատակով կապիտալ ներդրումների արդյունավետության հիմնախնդիրները: Կատարված ուսումնասիրությունների և սեփական այլ դիտարկումների արդյունքում առաջարկվել է մարզում ներդնել բարձր բերքատվությամբ ցածրաձ ծիրանենիներ: Այս դեպքում հնարավորություն է ստեղծվում ներդնել ինտենսիվ տեխնոլոգիաներ և կիրառել հակակարկտային ցանցեր, որը ոչ միայն բարձրացնում է կապիտալ ներդրումների արդյունավետության մակարդակը, այլ նաև օգնում է կառավարել բնական աղետների ռիսկերը:

Шираз МУРАДЯН

Капитальные вложения на посадку одного гектара карликового абрикосового сада (на примере Армавирского марза Республики Армения)

Ключевые слова: плодоводство, инвестиции, эффективность, абрикос, урожайность

В статье представлен анализ эффективности капитальных вложений, направленных на предупреждение ущерба от стихийных бедствий в абрикосовых садах Армавирского марза Республики Армения. На основании проведенных исследований и с учетом собственных наблюдений было предложено закладывать высокоурожайные карликовые абрикосовые сады. Это позволит внедрить интенсивные технологии и использовать противогололедные сетки, что не только повысит экономическую эффективность капитальных вложений, но и поможет управлять рисками стихийных бедствий.

Shiraz MURADYAN

The effectiveness of capital investments by the example of 1 hectare dwarfish apricot (in the conditions of RA, Armavir Region).

Key words: fruit growing, investment, income, effectiveness, apricot, fertility

The main problems of effectiveness of the capital investment were presented in the article in order to struggle against the natural disasters in the apricot yards of Armavir region, RA. As a result of the studies and other personal observations it was suggested to invest dwarfish apricot trees in the region, which are distinguished by their high productivity. In this case it gives the opportunity to invest intensive technologies and use anti-hail nets, which not only increases the level of capital investments but also helps to arrange the risks of natural disasters.